



Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

864

1852

864

1852



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ՏԱՐՈՐԱՆ

Գործարարական և արհեստագործական

և արհեստագործական




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՏԱՐՈՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՏԱՐՈՐԱՆ

Հայաստանի և արհեստագործական
և արհեստագործական ՏԱՐՈՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՏԱՐՈՐԱՆ



ՀԱՆՐԱՊԵՏ

ՏԱՍՆՈՐԵԱՅ

هنا كيداق

مجموعه علوم

HANKRIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ ԶԶ

1 04-05-06 1902



Լոնսրայի Սուրբ Պողոսի Մայր Եկեղեցին

Այս օրերս ամէնուն աչքը դարձած է Լոնտոնի վրայ, այդ մէլիսի և միւլի քաղաքին վրայ, ուր հինգ միլիոն ժողովուրդ կ'եռուզեռին: Սոյն առթիւ նկարագրենք Բրիտանիոյ մայրաքաղաքին մէկ քանի նշանաւոր շէնքերը ուր տեղի կ'ունենան Անգլիական ազգին ամենէն կարեւոր հանդէսները:

Ս. ՊՕՂՈՍԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս եկեղեցին՝ Հռոմի Ս. Պետրոս եկեղեցիին քիչ չատ նմանող ծրագրի մը վրայ

մը շինեց զոր Սաքսոնները քանդեցին. վեցերորդ դարուն՝ երրորդ անգամ ըլլալով Աստուծոյ տունը կը բարձրանար նախորդներուն աւերակներէն վրայ: Ասկէ ետքը երկու անգամ ալ հրդեհը աւերեց եւ երկու անգամ ալ նոր եկեղեցի մը բարձրացաւ:

Հիմակուան շէնքը երեք դուռ ունի. մին մեծը՝ գէպի արեւմուտք կը բացուի, իսկ միւսները հիւսիս եւ հարաւ կը նային: Գլխաւոր դուռը զարդարուած է կորնթական ճաշակով 12 սիւներէ որոնց վրայ կը բարձրանան ուրիշ 9 սիւներ եւ որոնք կը բռնեն եռանկիւնաձեւ ճակատը. քսաներկու ոտքէ



Բարլամենթի Պալատը

կառուցուած է, և կրնանք ըսել՝ թէ սա Լոնտոնի և ամբողջ Միացեալ Թագաւորութեան շէնքերուն ամենէն հոյակապն է: Քրիստաւոր Վրէն յղացաւ այս եկեղեցիին ծրագիրը եւ 1675ին ինքն իր ձեռքովը դրաւ առաջին քարը: Երեսուն և հինգ տարի ետքը իրեն տղան կ'աւարտէր զայն:

Մայր եկեղեցին միջնաքաղաքին մէջ շինուած է: Միեւնոյն տեղին վրայ Քրիստոսի 300 թուականին արդէն եկեղեցի մը կը բարձրանար զոր կործանել տուաւ Դիոկղետիանոս. ասոր տեղը՝ Կոստանդիանոս ուրիշ

ուս մարմարեայ սանդուղ մը մինչեւ հոս կ'առաջնորդէ: Դրան ճակտին վրայ կը կենայ Սուրբ Պօղոսի արձանը: Հիւսիսային դասը կը ձեւանայ գմբէթէ մը զոր վեց սիւներ կը բռնեն, եւ որու ճակատին վրայ հրեշտակներ՝ Բրիտանական զինադրոշմը կը բռնեն: Շէնքին ներսը երկու վերնատուն ձեւացած է՝ մին միւսին վրայ, որոնք քառակուսի սիւներով բռնուած են: Գմբէթը կը բարձրանայ երեսուն երկու սիւներու վրայ որոց մականիւնը չքեղ վանդակապատ վերնատուն մը կը ներկայէ:

Սուրբ Պողոտի ներքին տեսքը՝ հին մայր եկեղեցիներու ճարտարապետական ճաշակին վրայ չի նուստէ. ամբողջը ձեւացած է երեք թեւերէ որունք սիւներով եւ կամարներով իրարմէ կը զատուին. բուն տաճարի մասը որ միւս երկու թեւերուն հետ խաչմեր ձեւացնէ, ութը սիւներով կառուցուած է, որոնք տաճարին կամարը կը բռնեն: Նոյնպէս ալ դասը՝ սիւներով զատուած է միւս մասերէն: Դասին հարաւային կողմը դըրուած է եպիսկոպոսական աթոռը, իսկ հիւսիսային կողմը՝ Լորտ քաղաքապետինը: Եկեղեցին զարդարուած է մինակ քանի մը նշանաւոր անձանց արձաններովը, որոց մէջ է նաեւ ճարտարապետ Քրիստափոր Վրէնինը:

Ոլորապտոյտ սանդուղ մը՝ եկեղեցիին գագաթը կ'առաջնորդէ, ուրկէ կարելի է ամբողջ Լոնտոնը ընդգրկել մէկ ակնարկով: Վեր ելած ժամանակնիդ ամէնէն տապալ կը հանդիպիք նորանցքի մը որու հնչուն նրբամագ (whispering gallery) անունը կուտան, որովհետեւ այս տեղը եղած ամենափոքր շշուկը կը տարածուի ամբողջ եկեղեցիին պատերուն ուղղութեամբ: Հոս կէց կ'անցնուի աւելի նեղ սանդուղի մէջէ, որ կ'առաջնորդէ ձեզ մինչեւ գունտ մը որ գմբէթին վրայ կը կենայ եւ որու վրայ կը ցցուի խիլո ծանրագին ոսկեգոծ խաչ մը: Ամբողջ ելքը 600 ոտք սանդուղ է:

Եկեղեցիին զլխաւոր դրան երկու Լողմերը կը բարձրանան երկու զմեզակատուններ, ասոնցմէ մին կը կրէ 1613ին թափած զանգակ մը որ 6 ոտք արամագիծ ունի՝ եւ 8500 լիպրա կը կշռէ: Ասիկա կը հնչեցնեն միայն Վեհապետին, Արքեպիսկոպոսին եւ Լորտ քաղաքապետին մահուան ծառանայի. միւս ջնքին մէջ կոյ հսկայ ժամոցոյց մը որու ասեղը 8 ոտք երկայն է, ճօճանակը 14 ոտք երկայնութիւն ունի եւ վերջացած է գունտով մը որ 100 լիպրայէն պակաս չի կշռէր:

ՁԻՐԵՂ Ե. ՊԵՊԵՐԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԵՍՏԻԱՐԵԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂԶՆԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհիւր, զգալու գործելու սովորութիւններ: անաւոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Բ. — ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

20. Ձեր վարժունքի ներկայութեան մի՛ վախճաք

Վարդուհի շատ վախկոտ է: Երբ վարժուհին իրեն հետ կը խօսի, կը հարցնաքննէ, իրեն կը մօտենայ աշխատութիւնը դիտելու համար, Վարդուհին կը կարմրի, կը դողայ եւ տրամադիր է լալու: Կ'ըսէ թէ կը վախնայ իր դաստիարակուհիէն:

Անշուշտ յանգուզն եւ համարձակ լինելէն աւելի լաւ է յարգել ձեր ուսուցչուհին, որ ձեզ կ'ուսուցանէ եւ կ'առաջնորդէ, բայց անկէ վախնալ աւելորդ է: Ինչո՞ւ պիտի վախնաք ձեր ուսուցչուհիէն: Ի՞նչ չարիք կրնայ ընել ձեզ: Ընդհակառակը շարունակ իր բարեացակամութեան եւ բարախթեան փորձը չի՞ տար ձեզ: Կ'ըսէք, թէ կը վախնաք, որ ձեզ յանգիմանէ: Բայց եթէ յանգիմանելու արժանի բան մը չէք ընել, ինչո՞ւ կը կասկածիք խնոր ներկայութիւնէն:

Ձեր խղճին հետ հաշտ եղէք, զձեզ յանգիմանելու բան մը մի՛ ունենաք, ձեր կարողութեան ներածին չափով աշխատեցէք ձեր պարտականութիւնները կատարելու, յետոյ սիրեցէք ձեր ուսուցչուհին, այն առիթն ալ վախնալու բան մը պիտի չունենաք:

Շատ սիրած անձեան բնա չին վախճաք:

21. Ի՞նչպէս պիտի ե ընկուցիլ

խրատներն ու խորհուրդները

Փոքրիկ աղջիկներ, երբ ձեր վարժուհին ձեզ խրատ մը, խորհուրդ մը կուտայ, երբ ձեզ կ'ըսէ. « աղի՛կ կեցէք, աւելի ուշադրութեամբ սովորեցէք, ձեր անմիտ կամ

թեթև ընկերոջը մի՛ հետևիք, » այն ատեն դուք փափաք կ'ունենաք կրքով պատասխանել կամ ձեր մտքին մէջ փոքրիկ հակառակութիւն մը կ'զգաք և կ'ուզէք ձեր վարժուհիին այնպէս խօսիլ :

Փոքրիկ աղջիկներ, փոխանակ այսպէս փափաքելու և խորհելու, պէ՛տ է անորմէ շնորհակալ լինիք : Դուք պէտք է զբօսանքի կամ տուն դառնալու ժամանակ, անոր մօտենաք և ըսէք. « Տիկին կամ օրիորդ, չընորհակալ եմ ձեր իմ վրայ դարձուցած ուշադրութեան համար, չնորհակալ եմ զիս կշտամբելուդ և նոյն խի երբեմն յանդիմանելուդ համար : Գիտեմ որ ինձի տհաճութիւն պատճառելու համար չէ, որ խրատներ ու խորհուրդներ կուտաք : Ասոր համար երախտապարտ եմ և բնաւ պիտի չի մոռնամ : »

Բաղդաւուր է այն տղան, որ իր մօտն այնպիսի մէկն ունի, որ միշտ զուգուրանօք եւ անձնուիրութեամբ խրատներ ու խորհուրդներ կուտայ :

22. Քաղաքավարութիւնն ու բարութիւնը բոլոր երեքն

Թէպէտ և դուք ընկերներ և լաւ բարեկամներ լինիք և թէ մօտաւորապէս նոյն տարիքն ունենաք, իրարու հանդէպ քաղաքավար պէտք է լինիք, և եթէ իրար կը սիրէք ու բարի էք, այսպէս պիտի լինիք :

Գիտէ՞ք, ուր կը գտնուի քաղաքավարութեան սկզբունքները. կը կարծէ՞ք թէ գրքերու մէջ : Ձեզի տրուած խրատներուն մէջ : Ո՛չ, ո՛չ, ճշմարիտ քաղաքավարութիւնը սրձի մէջ գրուած է, հոն դրոշմուած են այն սկզբունքները, որ քաղաքավարութիւնը կը կազմեն :

Եթէ դուք բարի էք, եթէ դուք սիրտ ունիք, պիտի ըմբռնէք, թէ պէտք է չընորհալի կերպով խօսիք ձեր ընկերոջ հետ, թէ պէտք չէ դաժան լինիք, ձեր վարմունքով տհաճելի պիտի չլինիք թէ պէտք է անոր ըսել. « խնդրեմ » երբ որ և է բան մը կուզէք, երբ ձեզ փոքր ծառայութիւն մը ընեն, պէտք չէ մոռնալ չնորհակալ լինիլ : Դուք քաղցր, մարդասէր, ուղ-

ղամիտ պիտի լինիք, անոնց հետ խօսած ժամանակ չնորհալի բառեր պիտի գործածէք և ոչ թէ յոռի մակդիրներով, օրինակ, յիմար, անպիտան, անհասկնալի, ձանձուրալի, որ երբեմն կ'ըսուի :

Ի՛նչի՛ ելիք եւ փաղաքավար պիտի լինիք :

23. Վերաբանութենէ մ'ե՛տ

Վարդուհի և Սիրանոյշ ոչինչ բանի մը համար վիճեր էին : Վերջապէս Վարդուհին, որ անիրաւ էր, ըսաւ Սիրանոյշին. « Լաւ, մի՛ մոռնար, տեղը պիտի հանեմ » : Այն օրու ընէ ի վեր այս երկու փոքրիկ աղջիկները իրարու հետ գփտած են : Իրարու դէմ քէն ունին :

Տեսէ՞ք, փոքրիկ աղջիկներ : Վարդուհին եւ Սիրանոյշը անիրաւ են գփտած մընալուն համար. առաջ երկու փոքրիկ լաւ բարեկամուհիներ էին եւ իրարու հետ խաղալու մեծ հաճոյք ունէին, որովհետեւ իրար լաւ կը հասկնային եւ նոյն ճաշակն ունէին : Ահա բաժնուած են, այժմ երկուքն ալ անանձին են, կը ցաւին իրենց ընկերուհիին վրայ, բայց իրարու ներելու քաջութիւնը չունին :

Անոնց պէս մի՛ ընէք, տղա՛քս, խորհեցէ՛ք, որ քէնը գէշ զգացում մ'է, որ կը կարծրացնէ սիրտը եւ հետեւաբար ձեզ անընդունակ կը դարձնէ սիրելու : Մտածեցէ՛ք, որ դուք ալ ձեր պակասութիւններն ունիք, և շատ անգամ ձեր դատարարակը, ձեր բարեկամները ձեզ ներած են : Դուք ալ փոխադարձաբար ներեցէ՛ք : Գնացէ՛ք ձեզ վըշտացնող բարեկամին, համարեցէ՛ք զայն, ըսէք իրեն. « Վերջացաւ, մոռցուեցաւ » : Երբ ներեք, պիտի տեսնէք թէ որչափ զոհ կը լինիք :

24. Թեքեւանութիւն եւ Կամակորութիւն

Սիրանոյշ, որ պարտականութիւնը չկատարելու պատրուակ կը փնտռէր, շարունակ կը կրկնէր. թէ Թանաքս շատ Թանձր է, չեմ կրնար գրել :

Դատարարակուհին կը մօտենայ, Թանաքամանին մէջ կը նայի. — Ո՛չ, Սիրանոյշ, Թանաքդ Թանձր չէ, դեռ շատ լաւ կրնաս գործածել : Պէտք է դուրս ելնելէ առաջ պար-

տականութիւնը վերջացնես: — Բայց Սիրանոյշ կը յամառի, գրիչը ձեռք չառնելու և շատ անգամ կիսաձայն կը կրկնէ « Աւելի գէշ, պիտի չգրեմ, ա՛լ չեմ կրնար գրել: »

Զրօսանքի զանգակը հնչեց, տղաք դասարանէն դուրս կ'ելնեն, միայն Սիրանոյշ կը մնայ իր նստարանին վրայ, անգործ, յամառելով չէր վերջացնէր իր պարտականութիւնը պատրուակ բռնելով թանաքի թանձրութիւնը:

Քիչ կը մնար, որ զրօսանքի ամբողջ ժամանակն անցնէր եւ այդ փոքրիկ աղջիկը խաղալու չերթար, որովհետեւ դաստիարակուհին այդ բանով չէր խաբուեր. կը տեսնէր, որ Սիրանոյշ թեթեւամտօրէն կը յամառէր եւ պիտի չթողուր դասարանէն ելնել, մինչեւ որ պարտականութիւնը չկատարէր:

Արդ՝ հոս ո՞վ պատժուեցաւ: Դաստիարակուհի՞ն. ո՛հ, ո՛չ: Սիրանոյշն է որ որ կը յամառի ու չուզեր համակերպիլ եւ անհնազանդութեամբը զրօսնելու յարմար առիթ մը կը կորսնցնէ: Տղոց յամառութիւնը միշտ գէշ բան մ'է, Եւս անգամ քղայք փորձառու մարդիկներու խրատին հետեւելով մեծ վիճերէ կ'ազատին:

25. Բնաւորութեան փափկութիւն

Փոքրիկ աղջիկներ, նայեցէք փափուկ կտորի մը. եթէ գեղեցիկ շնորհալի կերպով մը ծալծլէք, սիրուն եւ հաճելի ցոլք մը կուտաք իր գոյներուն: Կը տեսնէք նաեւ որ յարմար է գործածուելու:

Գործաւորուհին պիտի կրնայ անով ուղածն ընել, այլ եւ այլ ձեւերով զգեստներ շինել կամ կահելու որ եւ է զարդարանք: Այս փափուկ կերպասի կտորը ամէն տեսակ բանի կը յարմարի եւ արժէքն աւելի կը բարձրանայ երբ գործածուի:

Ձեր բնաւորութիւնն ալ թանկագին կերպասի կտոր մըն է, որ կարող գործաւորուհի մը, ձեր դաստիարակուհին պաշտօն ունի արժէքը բարձրացնել, ազնուացնել, կարգի դնել ձեր բարիքին եւ ձեր երջանկութեան համար: Ի՞նչ պիտի ընէ, եթէ փափուկ չէ, խիստ եւ յամառ է ընդունելու այն լաւ սովորութիւններն, որ կ'ուզէ ձեր մէջն արմատացնել: Այս սովորութիւնները

բնաւորութեան ծալքերն են, որ աւելի հաստատուն կը մնան՝ քան թէ կերպասի ծալքերը:

Փոքրիկ աղջիկներ, հիւս եւ փափուկ եղե՛ք. ձեր երջանկութիւնը եւ ձեր յառաջդիմութիւնը հոն կը կայանայ:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

ՄԻԶԱՏԱԿԵՐ ԹՌՉԼՈՑ ԲՈՅՆԸ

Մայրենի սիրոյ գեղեցիկ օրինակներ միջատակեր թռչուններէն կրնանք առնուլ: Սոցա թռչուն աւելի սրածայր են, և ոտներուն շատ աւելի կարճ, գլուխն տափակ, ընդհանրապէս ցօղուններու և բարձրաբերձ ճիւղերու վրայ կը կենան, հագուադէպ է տեսնել այս թռչուններն հողին վրայ. շատ կ'ախորժին բարձրերը թռչտելէ: Բոլոր միջատակերներն գաղթական թռչուններ են, մանաւանդ մեր կլիմային համար:

Ընկերականութեան և եղբայրութեան բնազդումներն, ասոնց մէջ շատ զարգացած են: Միշտ խմբովին կը ճանապարհորդեն, մեծ սէր ունին իրենց ընտանեաց վրայ, ծայրայեղ կանխատեսութեամբ կը պատրաստեն իրենց բոյներն, մանաւանդ չիկահաւերը որք այնքան ճարտարութեամբ կը շինեն իրենց բոյնն:

Զրային եղէգներու մէջ ապրող տեսակ մը չիկահաւ կայ, որոնք մեծ արուեստիւ հրաշակերտներ կը կանգնեն ալեծուփ եղէգներուն մէջ, ասոնց էն նշանաւորն է Սիսիֆօլ կոչուած բոյնն որ քսակի ձև մ'ունի և որ հիւսման փափկութիւններովն և համեմատական ճաշական կը յիշեցնէ մեզ եկեղանիկին և թռչնաճանճին հրաշմեղ աշխատութիւններն:

Ծիծեռնակներն ևս առաջին կարգի ճարտարագէտներ են, իրենց բոյնին կազմութեան մէջ եղական և անմահ նազանդ մը կը ցուցնեն: Պատուհանի և ծխնելոյզի ծիծեռնակներով բոյններն հրաշալի աշխատութիւններ են որոնց մէջ գոյութիւն ունին որմնագործին արուեստն և ճարտարագէտին գիտութիւնն:

Ո՛չ միայն այս շնորհագեղ թռչնիկը

ճարտարութեամբ կը շինէ իւր բոյնն, այլ նաեւ այնքան հաստատ կ'ընէ զայն որ առանց քայքայելու երկար պահներ կը մնայ մինչեւ իր վերադարձն գարնան: Քանի մը տարիներէ ի վեր բարեկամներէս մին իր տանը դրան մէջ ծիծեռնակաց բոյն մ'ունի, որ ամէն ամառ զոյգ մը ծիծեռնակի ամուսնոց կը լինի: Անոր համար լուսագոյն վարձակալներ են որք այնքան բարի սիրտ մ'ունին, այնքան կը խնամեն իրենց ընտանիքն և բարեկամս հարկ յնշեալ առնոց մայրենի սէրէն, այժմ կը նկատէ դանձր իր տանը անբաժան Դնակիչներն և թէպէտ այդ շնորհալի վարձակալներն երբեք վարձագին չեն վճարեր, բայց ինք հարիցաւ պիտի զգայ թէ անոնք օր մը իւր տանիքը լքանեն:



ԱՌՏԻԱՐԳԱՐԵԳԻՆ

ԵՒ ՏԻԿԻՆ ՎԻԿՏՈՐԻԱ ԴՈՐՏՈՆՃԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՀՈՐՄԱՆԻՔԸ

Ն Ի

ՏԻՊԱՐ ՀԱՐՍՆԱՑԵԱՆՆԵՐԸ

Դեռ այնքան թարմ է անոնց տպաւորութիւնը մեր ամենուրեք յուշերուն մէջ, որքան եռանդուն սրտերուն մէջ՝ բոց ներշնչութիւն աւելնը, որքան վառ զգացումին տրամադրումն, մեր գաղափարաց մէջ, անոնց յիշատակն այնչափ անթարչամ է, որչափ սիրունիչու վսեմին հիացումը՝ մեր հիշողութիւնն մէջ՝ մշտնջենի:

Իսկիւտարի Ա. Սաչ Ժամնէնք, ուսումնական եօթն ու կէսն է: Տաղաւար օրերու յատուկ իր պահենի բոլոր սրբազան ճոխութեամբն զգեղեցիկութեամբն հագուեր, չքուեր է եկեղեցին: Նոր ու արաքսալոր շրմագալոյց մը մոմէ աստեղատուններ վազեր է խորաններուն ու ջահերուն վրայ: Աստուծոյ տունն այն օրը գողցես աշխարհականցած, ալ սուելի գուարձատէր ու պճնամոլ ապարանքի քան սովորական տաճարի ցոյցն ունի. կար-

ծես թէ պատարագելու տեղ պիտի պարէ՝ եւ աղօթելու տեղ պիտի բաժակահառէ: Աստուածածինն իսկ իր պատկերի շրջանահին մէջ, ոսկի հոռերով, գոհմի վարսերով, արծաթաձոյլ քղանքներով այնքան դարձուեր է, որոց ի տես կ'ը կարծէիր թէ նոյն օրը Գալիլեացոց կանախ խալիստան խնդամոզ աղջիկին ու գինարձու կոյսին դէմքովն ալելի ասպետուհի կը նազէր քան կանանց սեռին պաշտպան համեստաշուք սրբուհին կ'արձանանայ: Եւ այդ օրը, Յուլիոյ վառլառ արեւովն ու եղեմովայր Չամլըճայի Կոյլ զով գեփիւռներովն հեշտաւտուած՝ գեղանահ՝ այդ Օրը երկուշաբթի էր. Լուսաւորչայ երկուշաբթին, ուր յայտնու յարկինք խնջոյքի խախտութեամբ տուններ կը շէնցնեն, եւ եկեղեցին նշանած մանչերը՝ փեսայ, ու խօսեցեալ աղջիկները հարն կը պսակէ, զանոնք կապող սէրը սրբազոծելով, Սորհուրդին եօթնարփի շնորհներէն միովը կ'օծտէ, կը զմուտէ ու կը կատուաւորէ, աստուածբերան շունչովն ալ նոր արարիչներ շինելու թագուն հոգին կը փչէ անոնց, որպէս երբեմն երբայական Եհովան փչեց մեր գրախտի կոյտ մը կաւին: Ազամն ու Յիւան ստեղծելէն յետոյ՝ մարդ ստեղծելու եւ անով աշխարհքը շէնցնելու արարչական պաշտօնն Աստուած տուաւ ծնողաց:

Թողէն ու հեռի տեղերէն երկուսն հետաքրքիրներ, նա մանաւանդ փափկասուն տիկնայք, սիրասուն օրիորդք աւելի բազմահոյն են. սիրամարգներու պէս գեղափետուր, նախշուն եւ ուռուցիկ պճնազարդուած՝ տաճարին սրահը՝ գաւիթէն մինչեւ վերնատուն մեղուախառն պարս առած՝ իր բզզան ու կը բզզան իրենց մեղրէ ու կիծէ բանուած լեզուներով: Ո՛ր զիտէ թոռմած կամ նոր ծրլած աւերերու, արեւ չտեսած սուտնին եղերներու (տոամ) հոգեբանական կամ գեհեհեհական ինչ ծրարնկը կը քալեն, կը քրքրեն. որքան բարուրներ՝ նանիւրներ, կը կարեն, կը կնարկեն մոխրացած անցեալներու խորտի շիւղի շուք մ'իսկ չարժմիզ զրոյցներու կտոր կացութեանով թրքաբու հետ լեզու կտրելով հանդերձ՝ սեւեւարիք աչքքեր ալ են, ծաղկաքաղ նետերով ամէն կողմ իրենց մեղրու նայուածքները, նամանուանդ դէպի գաւիթին դուռ:

Կիներն ուր ալ դանուին, թէ՛ Աստուծոյ

թէ մարդոց առջեւ, միշտ զարդարուած լինելու են. կին ըսելը ինքնին զարդարանք ըսել է. կինը աղւորութիւն է, զոր քուրջերու, գրգռելի մէջ դադկահարելը ագամանդը աղբիւրը նետել է: Կիներուն պարզասիրութիւն քարոզելը անոնց արժանապատուութեան ու փափկանկաթութեան վերջին թելը պրկել է. ինչ որ բրտութիւն է, Կինը պարզասէր է՝ երբ աղքատ է: Հարուստը պէտք է որ լինի պճնասէր:

Տաճարին պահակերող, սպասարկող Ղեւտականքն ալ, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, սարկաւազ, լուսարար, դպիրք ու երգեցիկ մանուկներ, պահարանէ պահարան, դասէ դաս, խորանէ խորան մէքիք ու ծիծեռնակ կը պատին. ոտքէ մինչեւ գլուխ, նուիրապետութեան կարգին շքեղագոյն համազգեստներով՝ Եկեղեցոյ սեղանէն աւելի դէպ անոր սեմ դարձուցած են իրենց երեսները սուր սուր ու իրենց աչքերը տէգ տէգ:

Չուրած ու ծամծմուած այս թունտ պահուէն, աւետեաց ձայնի մը պէս կը լսուի Հիմէնեան կառքերու խուլ դղրդիւնը, զոր բարձունքէն կ'ողջունէ ու կընթռնէ նուիրական արոյրն իր գոռ գանգիւններով: Եւ ահա այնքան խնամուտ հանդերձանքներով, այնքան սրտմաշուք ու սպառող երկայնմտութեամբ ու պատուած Հարսն ու Փեսան կ'երևին Տաճարին սեմին վրայ, իրենց բոլոր ակնախտիդ պերճութեամբ քողուած ու պայծառացած. չքաղիր ու պարառու ունենալով հրաւիրեալներու թափօրը, զոր խմբած էին ազգին բարձր ու քաղքենի դասակարգերէն քաղուած հատընտիր Տիարք եւ Տիրուհիք ամէնքն ալ հարսին ու փեսին պէս հագուած, չքուած, եւ անոնց պէս օրուան ասպետն ու ասպետուհին բուրող:

Ի տես հարս ու փեսին՝ երբ ատտին հանդիսական ժողովուրդն ամբողջ դէմքն անոնց նետած՝ հիացման քապլօ վիվան մը կը կտրի, անդին ծնծղալի սրբասացութիւններն ու զիլ սրբաձայնութիւններն ալ սկըսած են թնդացնել տաճարը, որուն զոչուն ահեղութեան ու մեր ամէնուս խանդավառ լուրթեան մէջէն կանցնի սիրակցորդ ամուր աւելի ծնրադրողի զոգութեամբ քան փքացողի սիգանքով, և կ'երթան, կանկ կ'առնեն, կ'արձանան Տիրամօր խորանին առ-

ջեւ, ձեռք ձեռքի հիւսուած, գլուխ գլխի կարուած: Հոն երկուքը մի մարմինի պիտի գոյափոխուին, Աստուծոյ փոխանորդին Ս. Աջոյն և Յիսուսի Ս. Խաչին ներքեւ, ճիշտ ինչպէս Քրիստոսի մարմինին ու արեան կը գոյափոխուին հացն ու գինին. Ս. Պատարագչին ընթերցմանց ու մատանց տակ: Երիցս ԱՅՈՒՄ եւ ահա կնքուած է ամուսնութեան դաշինքն անլուծելի: «Չոր Աստուած զուգեաց մարդ մի մեկնեացէ»: Լուծանելի բացառութիւնը օրէնք չէ. Յիսուս ալ շաբաթը լուծեց՝ փոսն ու հորն ինկած ոչխարները հանելու համար, եւ աշակերտներն ալ հասկեր կորզեցին շաբաթ օրը իրենց նօթութիւնը անցնելու համար:

Բնիկ թէ պատուակալ ծաղկեփիլոն քահանաներէ, ծայրագոյն վարդապետներէ, երգեցիկ դպիրներէ չըջապատեալ՝ Պատկադիրն է Ատանաի նախկին բազմարդիւն Առաջնորդ, Կիրիկիոյ Կաթողիկոսական վանքին ամէնէն շատ խելանի ու գործունի միաբաններէն, Հիմայ ալ թաղին բարեխրատ քաղողիչ, Մկրտիչ Եպիսկոպոս Վեհապետեան, որ իր զգածեալ դէմքովն եւ Ս. Գրոց ներշնչմամբ լեցուն, նախանի Ս. Հարց հոգւովն ու շնչովն օծուն, իրեն յատուկ ճարտասան խօսքերէն դատ, մականուան պէս ալ գիտէ յաւելուլ վեհութեան շուք մ'ալ աւելի ամէն արարողութեան ու հանդիսութեան, ուր ուրք ալ նախագահէ: Պատկի խորհուրդն եւ անոր լրացուցիչ ներքողի, մաղթանքի ճառ քարոզէն յետոյ կ'աւարտի հարսանեկան ժամերգութիւնը: Ժողովուրդը կը ցրուի տանելով իրեն հետ օրուան չափ գեղեցիկ հանդէսի մը յիշատակն ու հոգեշարժ ապաւորութիւնները: Իսկ հրաւիրեալք Ս. Հարց դասուն հեթ կառաջնորդուին եկեղեցիի ու դպրոցներու մօտ երբեմնի Ընթերցատուն կամ թատերասրահ շէնքը ուր անբըլմէն փեսան շատ խելացի ու ընդօրինակելի մտածութեամբ, մասնաւոր ծախքով եւ ընտիր ճաշակով չքանդան մ'էր արդու դարձած: Հարսանեկան խնջոյքի մը յատուկ լրացուցիչ ու նրբացած բողբոջազի հանդերձանքներն համեղ կը բովանդակէր, իր պարզութեան ու համեստութեան մէջ, Հոն ամէն ինչ մեծարանք, ամէն չրթունք՝ մաղթանք, ամէն խօսք՝

խանդաղատանք ու գուրգուրանք, փրփրուն բաժանները՝ ձեռքէ ձեռք, պերճախօս րաժականները՝ բերանէ բերան: Ամէնուն զըւարթ գոհունակութեան, սրտագին խնդակ-ցութեանց ու ջերմեռանդ շնորհաւորումնե-րու անկեղծ ցոյցերով աւարտեցաւ Հանդէսին այս ամբողջացուցիչ մասն ալ: Մասնա-ւորապէս գովուեցաւ չքասեղանի այս նորե-ղանակ ու բարիօրինակ յարգարկու մտա-ծումը, որով Հանդէսին կրօնական թէ՛ աշ-խարհական արարողութիւնք, մեծարանք, ամէն ինչ եկեղեցւոյ մէջ եւ անոր շուրջը կը կատարուին, թէ՛ հրաւիրեալք հարսի, փեսի տունէ տուն դեգերելու յոգնութենէն եւ թէ՛ հարսնեցեալք ալ՝ կարգ մը հիւրընկալի խոնջէնքներէն ազատ կը մնան:

ՏԻՊԱՐ ՀԱՐՍՆԱՑԵԱԼՆԵՐԸ

Սոյն հարսանեկան հանդէսին մէջ փե-տան էր Տիար Գարեգին Ե. Գորտոնճեան, իսկ հարսը՝ Օրիորդ Վիկտորիա Պ. Պառ-նասեան:

Տ. Գարեգին, Բնիկ պոլսեցի, ծնեալ ի Բերա, օժտեալ ձիրքերովը պատիւ կը բերէ ազգին նիւթասպէս թէ բարոյապէս ծաղկեալ ու զարգացեալ երիտասարդութեան, եւ մին է անոր այն անաղօտելի փայլերէն որք, ո՛ր հորիզոնի տակ եւ ո՛ր պայմաններու մէջ ալ լոյս տեսնեն, կը հանդիսանան միշտ պար-ծանք այն ժողովուրդին որու կը վերաբե-րին եւ կը լինին միեմտարանք ու բարի օ-րինակ իրենց նմանեաց: Նախնական կրթ-թութիւնն սկսած է Բերաի վարժա-րանին մէջ, Պարտիզակի ամերիկեան դիւչե-րօթիկ մեծ կրթարանին մէջ շարունակած է իր երկրորդական ուսումները, իսկ բարձրա-գոյն կրթութեան շրջանն աւարտած է դպ-րոցաց դպրոց Պէրպէրեան Լիկէոնին մէջ: Բոլոր ուսուցիչք առ ոտս որոց կրթուած է ինքն անձամբ, գրուատեօք կը յիշեն իր ուշիմութիւնն ու ժրաջանութիւնը: Ամէն դպրոցականներ որոց հետ ապրած, աշխա-տակցած է ցարդ կը յարգեն զինքն ու կը սիրեն, հարազատ եղբոր մը նման. մտերիմ բարեկամի մը պէս: Իբրեւ տիպար բարե-կիրթ ու բարեկրօն ուսանող, եւ իբրեւ ու-սումնական ու լեզուագէտ հայ երիտասարդ, մեր ամէնուս հաւաքական ու հանրային

յարգանքի բաշխման մէջ ունի իրեն արժա-նի պատուոյ անժխտելի բաժինը: Հմուտ է թէ նոր եւ թէ հին Հայերէնի, Օսմաներէնի Անգլիերէնի, Ֆրանսերէնի, ինչ որ թէ մեր մայրաքաղաքին եւ թէ օտար մայրաքաղա-քաց հետ՝ իրեն նման միջազգային տուրեւ-առիկ ո՛ր եւ է երիտասարդի, եւ մանաւանդ հայ երիտասարդի մը համար մեծ պարծանք ու առաւելութիւն մը ըլլալուն հետ մեծ պա-տիւ մըն է նաեւ օտարաց առջեւ ներկայա-ցուցած իր համայնքին համար որ դժբաղ-դարար իրեն պէս քիչեր կը համրէ իր մէջ: Տր. Գարեգին որ տարիներէ ի վեր դպրոցէն շուկան մեկնած է, ձեռնահասորէն կը վարէ իր հանգուցեալ հօր ժառանգ թողած գո-հարավաճառի ճոխ ու կազմակերպեալ առեւ-տուրը, ոսկերչաց շուկային մէջ, որ Պոլսոյ ամէնէ աւելի բանուկ, հարուստ, պատուա-ւոր առեւտրական հրապարակն է ուր գոր-ծողներու չքանք ամբողջութիւնը, մեծա-մասնութիւնը հայերէ կը բաղկանայ. թէ թուրքիոյ թէ եւրոպական հրապարակաց վը-րայ շինած է պատուաւոր հայ գոհարավա-ճառի մը գոհարի չափ թանկագին համբաւը, վարկը, գրաւելով հանդերձ համակրանքն ու համարումն ազգային թէ տարազգային ամէն արհեստակցաց ու գոհարավաճառաց, որոց կը գործակցի եւ կը մրցի գնահատելի ու աննախանձ ժրութեամբ, որուն շնորհիւ իր հանգուցեալ հօր թողած եւ առեւտրական գործն աւելի ընդարձակած եւ իր ընտանի-քին բարեկեցիկ դիրքն ալ աւելի բարձրա-ցուցած է, ինչ որ մեծ պատիւ մ'է եւ մեծ օրինակ իր նման ամէն հայ երիտասարդաց որք իրենց հօր մահէն յետոյ կը ժառանգեն իրենց հայրերուն գործն ու գանձը, եւ վայն փոխանակ վառաւելօրէն մսխելու կը բազ-մապատկեն եւ իրենց ծնողաց յիշատակն ու անունը կը փառաւորեն: Իր այս փայ-լուն կեցութեան մէջ ոչ միայն անյարձա-կելի պահած է ողջախոհ եւ հեղաբարոյ ե-րիտասարդի մը բոլոր ցանկալի եւ փնտրու-ուելիք յատկութիւնները, անապականիի նկարագիրն եւ ընկերական թէ ցեղային բո-լոր ժառանգական, աւանդական չու դառա-նական առաքինութիւնները, ինչ որ մեր միջավայրերու համար բարոյական մեծ յաղթանակ մը կ'արժէ, չի մեղսակցե-լով երբէք իրեն տարեկից ու քաղաքա-

կից խել մը խօլ ու խէնէշ երիտասարդներու կործանարար, անպատուարներ մոլութիւններու, խաղերու, գրօսանքներու որոնց ընկղմարան անդունդն յատակ չունի: Իբրեւ գեղեցիկ դպրութեանց ուսանող ու սիրող ալ, պարապոյ օրերուն ու ժամերուն մէջ իր նախասիրական զրադուհներն ու նախընտիր հեշտութիւններն եղած են տանը մատենադարանի գրքերն ընթերցասիրելուն հետ ի միասին՝ օրն օրին ալ Հայ թէ օտարազգի լրագրաց, հանդէսներու ու նոր հեղինակութեանց միջոցաւ յամառօրէն հետեւիլ անցեալ թէ ներկայ գրական ամէն շարժմանց իմացական ու գիտական աշխարհին բոլոր երեւոյթներուն:

Գորտոնճեան ընտանիքը յիշատակելի է արուեստագիտական ու հնարչական տեսակէտով ալ, զի մականունին մէջ կը համառօտէ ոչ լոկ հայ ոսկերչաց հնարագէտ մտքին պատիւն աւելցնող՝ այլ եւ առեւտրական տեսակէտով հանրային մեծ կարեւորութիւն ունեցող գիւտի մը պատմութիւնը:

Տ. Գարեգինի հայրը, հանգուցեալ եղիա էֆ. Գորտոնճեան առկէ 20—30 տարի առաջ՝ առաջին անգամ ինքն յօրինած եւ տիրող նորաձեւութեան կարգն անցուցած է այն գուտ ոսկիէ շղթաները (գորտոն), նուիրական համրիչի կամ վարդարանի չափ երկար, որք ամէն ազգի ազնուական ու հարուստ դասերու միակ սիրական ու թանկագին գոհարեղէն զարդն էին. գերազանցելու չափ եւրոպական նուրբ ճաշակն ու արհեստագիտական ճարտարագործութիւնը, որ յաջողեցաւ ապա կարճ շղթաներ հրապարակ հանելով եւ նորաձեւութեան կարգն անցնելով նուազեցնել հայ հնարչին գործոց եթէ ոչ արժէքը գէթ, անոր շրջաբերութիւնը: Գորտոնճեանի այդ ոսկեղէն շղթայով վիզն ու կուրծքը շողողացնելու համար հոգի կուտան նոյն ատենի թէ՛ այրեր, աւելի կիներն ու երիտասարդներ, թէ օրիորդներ ընկերական ո՛ր դատակարգին ալ վերաբերէին. բաւական էր որ 20—30 ոսկի խնայողութիւն մը ըրած ըլլային, իսկոյն պիտի գնէին, կախէին հատ մը այդ շղթայէն: Այդքան ընդհանրացած էր անոր գործածութիւնը թէ իբրեւ նորաձեւութիւն, թէ իբրեւ զարդ եւ թէ իբրեւ խնայուած դրամ,

զի գնողն երբ հարկի մը տակ ծախէր՝ ոչինչ կը կորսնցնէր վճարած գինէն:

Այդ շղթայասիրական ախտէն վարակուելով եւ ես, դեռ գիշերօթիկ ուսանող եւ քսանամեակ երիտասարդ, երբ գրպանիս մէջ ունէի 50 ոսկի, տարեկան հասոյթը միակ կալուածիս, խօլաբար վճարեցի 20 շողողուն ոսկիներս այդ մոգական շղթաներէն մէկուն որ դեռ ցայսօր սիրական մէկուն միակ թանկագին յիշատակս ու վերջին գարդը կը մնայ:

Գորտոնճեան Եղիան՝ որպէս սովոր է կոչել չուկաի անտաշ ու կոշտ լեզուն, հակառակ այնքան փափուկ արհեստագիտական ճաշակին ու շինած գործերուն, իր այս գիւտովն արդէն նոր բախտ մը շինելէն զատ՝ տարիներով ոչ միայն թուրքիոյ այլ և եւրոպական գոհարի հրապարակաց վրայ տուրեառի, հանրային շահու նոր աղբիւր մը ստեղծած է, որմէ մեծապէս օգտուած են հայ ոսկերիչները, թէ իբրեւ գործաւոր, թէ իբրեւ վաճառական. մինչեւ որ Եւրոպան անոր կեղծը շինելով եւ վերջն ալ ձեւը փոխելով Գորտոնճեան գիւտը մասնաւոր հնասէրներու շահարածին մնաց: Հեղինակած շղթային անունով շղթայագիւտ (գորտոնճի) կոչուած է հանգուցեալ Եղիա էֆ. որուն որդիներն ալ՝ իրենց հանճարեղ հօր յիշատակը մշտնջենաւորելու համար, իբրեւ պատուոյ տիրոջս Գորտոնճեան մկրտած, կնքած են իրենց եւ իրենց ընտանիքին մականունը՝ փոխանակ Համբարձումեանի, որպէս դեռ ցայսօր կը կը մականունի Տ. Գարեգինի ամուսնացեալ այլ զաւկէ ամուլ ողջ հօրեղբայրը, որ եւ գիպտոսի մէջ հարուստ վաճառական մը եւ առեւտրական ընդարձակ գործ մը ունի:

Գորտոնճեան ընտանիքը յիշատակելի է նաեւ զարմիկ սերունդի նահապետական բեղմնաւորութեամբը: Հանգուցեալ Եղիա էֆ. կանոնաւոր ամուսնացած, 53 տարեկանին մէջ մեռած: Ունեցած է միմիայն եօթն զաւակ. եօթն ալ արու (ըրեւնք, Աստուած չար աչքէ. չար նազարէ պահէ), եօթն ալ քաջառողջ, ամէնքն ալ կայտառ, կարմիր երեսներով, վառվռուն աչքերով, գեղեցիկ դէմքով. բարակամիտ ու հանճարեղ, որոնցմէ ոմանք դեռ ցերեկեայ ու գիշերօթիկ ուսանող կը մեծնան:

Տ. Գաբրիելին իր եղբայրը մէջ երէցն է որ փեսայացաւ նորին կայսերական Վեհափառութեան Պալատան թարգման, Տպագրական Տեսչութեան գիւանին երկարամեայ քարտուրադարարպետ, Հայերէն եւ ծրանս. լրագրերու գրաքննիչ, հանգուցեալ Վեհ. Պառնասեան էֆէնտիին, ամուսնանալով անմիջապէս անոր մէկ հատիկ զաւակն ու ժառանգն եղող օրիորդ Վիկտորիան հետ։

Օրիորդ Վիկտոր արդէն կանուխէն հօրը իմաստուն ջանքերով շնորհիւ խնամեալ կրթութեամբ մը օժտուած է։ Մեզպուրեան վարժարանի հանճարեղ ուսանողուհին եղած է ան եւ իր կարգի շքանաւարտուհեաց մէջ առաջինը ծախահարուած։ Ձեւագէտի չափ հմուտ է ընտանի ձեգարուեստին։ Ղաշնակին առջեւ երբ անցնէ՝ նուագաց նոր Մուսաի մը դէմքը կ'առնու։ Շատ ներկուռ ներհունութեամբ ուսած է հին թէ՛ նոր հայ լեզուն, ֆրանսերէնը՝ որ իրեն մայրենի լեզուին չափ ընտանի եղած է օրանէն սկսեալ։ Օր. Վիկտոր գեղեցիկ սեռին փայլն ու փառքը պանծացնող բոլոր քարոյական, իմացական գերազանց ու գովելի ձերքերովը զարդարուած հատընտիր հայուհի մըն է։ Կը ճանչնամ զինք Մեզպուրեան ծաղկոցի կամ մանկապարտէզի գրասեղանէն, երբ նոյն դպրոցի վերին կարգերուն մէջ իրեն անդրանիկ ու վաղամեակի քոյրն չքնադաճիրն խակիան կ'աշակերտէր մեզ տարիներով։ Մեր վաղեմի բարեկամ իր հայրը թէեւ նոր մեռած սակայն, իրեն անհատական թէ ամուսնական կեանքը բարեկեցիկ ու երջանիկ ապրեցնելու համար թողած է պէտք եղած երաշխաւորիչ նիւթականը։

Տիկին Վիկտոր Գ. Գորտոնճեան իր բոլոր նվանեաց մէջ սա մեծ քարեբախտութիւնն իրեն ճակատագիր ունեցած է որ իմաստասէր, գրագէտ, լեզուագէտ ու առաքինի մեծանուն հօր մը զաւակն ըլլալէ ցետոյ, բախտաւորուած է նաեւ ազգին երիտասարդութեան ծաղիկն եղող նմանապէս իմաստուն, գեղարուկըտագէտ ու առաքինի ամուսնոյ մը կողակեցն ըլլալ։

Կը շնորհաւորենք սոյն բաքերատուիկ ամուսնութիւնը, ամենուն ջերմագին խնդակցութեանց հետ։ Կը մաղթենք որ ինչպէս եր-

ջանիկ հարս ու փեսայ եղան, նոյնպէս ալ երջանկագոյն հայր ու մայր ըլլան։ Բարեկիրթ ու բարեկեցիկ հայ ընտանիքն ըլլան, որու պէտքն շատ զգալի է։ Զի մարդկային, ընկերական եւ այլ բոլոր հաստատութեանց մէջ ընտանիքի հաստատութիւնն է միակը, որմէ կախումն ունի համայնքի մը բարոյական իրական վերաշինումն։ Տիար եւ Տիկին Գորտոնճեան ըլլան շինիչ ու ծաղկեցողիչ հայ ընտանիքներու նոր պարծանքը։

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



Հ. Ի Տ Ա. Կ Ա. Ն. Վ. Է. Պ.

Փ Ի Խ Լ Վ Է Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 26րդ թիւէն)

Լաստը պահպանելու հողը Հանսի յանձնեցինք եւ հօրեղբայրդ ու ես սկսանք ծովեզերքն ի վեր լողգլարիկէլ նոր բան մը գտնելու յոյսով։ Մէկ երկու մղոն վեր ընթանալով եզերքէն ու դէպ ի կրանիթէ դաշտերը ուղղութեամբ, ոտքերնուս տակ ոսկորներու ահագին կոյտեր կը գիզուէին։ Նախաջրհեղեղեան հաղարաւոր տեսակէնդանիներու մնացորդներ էին պտոնք։ Հօրեղբայրս մէկ ոսկորէն միւսը կը վազէր, կը նայէր, կը քննէր։ Յանկարծ կանգ առաւ եւ ոտքերուն ձայնով մը գոչեց։

— Ա. քսէ՛լ, Ա. քսէ՛լ, մարդու գլուխ մը։

— Մարդու գլուխ մը. հարցուցի զարմացմամբ։

— Այո՛, եկու՛ր։ Ա՛խ, Պարոն Միլն էտուարս, ա՛խ, Պարոն Գաթրըֆաթ, ինչո՞ւ հոս չէք, ինչո՞ւ չէք կրնար տեսնել իմին աեսածս, իմին, Օթթօ Լիտէնպորքի տեսածը։

ԼԲ.

Անկարելի է նկարագրել հօրեղբորս ուրախութիւնը, եսք քանի մը քայլ անդին դէմ աւ դէմ եկաւ մարդկային մարմինի մը հետ. ասիկա մինակ կմախք մը չէր. ամբողջ մարմին մը՝ ակուններովը, մազերովը, երկար եզունգներովը հոն առջեւնիս կը կենար, առանց ամենափոքր տւրուածք մը կըրելու. դիմացնիս կը ցցուէր ան՝ այն վիճակին մէջ զոր ունէր ապրած ժամանակը:

Ուրիշ դարու մը այս մնացորդին առջեւ լեզուս կապուեցաւ. հօրեղբայրս, այնքան ճարտարաբօս. այնքան ճոռումբան, համր կը մնար ինծի պէս: Վերցուցինք այս մարմինը եւ քարի մը կռնցուցինք փոսացած աչքերով մեզի կը նայէր. պաղած կուրծքը ձեռքերնուս տակ կը շօշափէինք:

Հօրեղբայրս ինքզինքը մոռցաւ կարծես. Գտնուած տեղը, պարագաները, ամէն բան կորսնցուց յիշողութենէ եւ ինքզինքը Եօհաննէօսի դասարանին մէջ, աշակերտներուն առջեւ կարծելով սկսաւ դասախօսութիւն մը ընել երեւակայական ունկնդիրներուն ուղղուած:

« Պարոններ, գոչեց, պատիւ ունիմ ներկայացնել ձեզ չորրորդական դարու վերաբերեալ մարդկային կմախք մը: Շատ մեծ գիտուններ ուրացան անոր գոյութիւնը, ուրիշներ՝ պնդեցին անոր վրայ: Եթէ հնաբանութեան այդ Թովմաս առաքելաւեալները հոս ըլլային. ձեռքովին պիտի շօշափէին զայն եւ հաւատային անոր գոյութեանը: Դիտեմ թէ գիտութիւնը շատ զգուշութեամբ վարուելու է ասանկ գիտերու մասին, նոյնպէս չեմ անգիտանար Պարնըմ եւ ուրիշ խորեբաներու մարդկային բրածոյներու վրայ ըրած շահատակութիւնները: Աչքէ անցուցի բոլոր պատմութիւնները, ճառերը, հակաձառերը, որոնք նախնական մարդու ոսկերտիներուն վրայ կը խօսին. այո՛, պարոններ, գիտեմ նաեւ թէ Քրիվիէ եւ Պլիմէնպախ այդ ոսկորներն Մամութի եւ կամ ուրիշ չորրորդական դարու մէջ ապրող կենդանիներու վերագրեցին: Բայց հիմա, ալ կասկածի տեղի չկայ՝ դիակը հոս է, ամէնքնիդ ալ կրնաք զայն տեսնել, ամէնքդ ալ կարող էք շօշափել զանիկա՝ Մինակ կմախք մը չէ ներկայացուցած, ամբողջ մարմին մըն է, բո-

լորովին անքանդ վիճակի մէջ պահուած, հնաբանական գիտութեան օգտին համար:

« Եթէ կարենայի այս մարմինը լուալ ծծմբական թթուի մէջ՝ զայն ծածկող բոլոր հողէ ու կաւաքարէ պատեանը պիտի անհետանար, բայց դժբաղդաբար, այդ լուծիլ թթուն չունիմ տրամադրութեանս տակ: Եւ սակայն աս դիակը իր գտնուած վիճակին մէջ իսկ պիտի ըսէ մեզ իր պատմութիւնը:

« Կը տեսնէք որ, շարունակեց հօրեղբայրս, վեց ոտքէն աւելի բարձր չէ, և աւանդութեամբ կարծուած հսկաներէն շատ հեռու ենք: Յայտնի է որ այս մարդը կովկասեան ցեղէն է. մեր՝ ճերմակ ցեղէն՝ գանկը կանոնաւոր հաւկթածեւ է, առանց այտերու ցցման կամ կզակի երկարումի. դիմային անկիւնը գրեթէ 90 աստիճան է, եւ նոյն իսկ աւելի հեռուներ երթալով պիտի համարձակիմ ըսել թէ Յարէթեան ցեղէն է ան՝ որ Հնդկաստանէն մինչեւ Եւրոպայի արեւմտեան կողմերու բնակչութիւնը ձեւացուցած է: Մի՛ խնդաք, պարոններ: »

Խնդացող մարդ չկար, բայց հօրեղբայրս վարժուած էր ժպտուն դէմքեր գտնելու իր դէմը հմտալից դասախօսութիւններու միջոցին:

« Այո՛, շարունակեց հօրեղբայրս նոր ոգեւորութեամբ մը, բրածոյ մարդ մըն է ասիկա, ժամանակակից այլակենդաններու՝ որոնց ոսկերտիքները կը լեցնեն սոյն ամփիթատրոնը: Ձեռք կրնար բացատրել թէ այս բրածոյները պարունակող հողերը ինչպէս մինչեւ երկրիս այնքան խորերը սահեր իջելը են: Անշուշտ չորրորդական դարու մէջ ահագին յեղաշրջումներ տեղի ունեցած են երկրագնդին վրայ. մեր մոլորակը շարունակաբար պաղելով՝ կեղեւը ձեղքուեցաւ, բացուեցաւ եւ բարձրագոյն հողերուն մէկ մասը բացուած խորխորատներուն մէջ սահեցան: Անձնական կարծիք մը չեմ՝ յայտներես ըսելու, Վարդը հոս է, չըջապատուած իր ձեռքովը պատրաստած գործիքներովը, կացիներովը, սրուած գայլախաղերովը, որոնք գայլախաղային դարը կը ներկայացնեն: Եւ եթէ այս մարդը իր գոմարջիկ կամ ինծի պէս իբր գիտութեան խուզարկու չէ եկած նայ տեղուանքը, չենք կրնաք կասկածիլ իր բնութեան վրայ: »

Դասախօսը լռեց, եւ ծափահարել սկսաւ :
 Հօրեղբայրս իրաւունք ունէր, եւ ինձմէ
 չատ աւելի գիտուններ կարող չպիտի ըլ-
 լային հակախօսելու անոր : Ամէն մէկ քայ-
 լերնուս մէջ մէկ հատ մարմինի կը հանդի-
 պէինք : Մարդերու եւ կենդանիներու այս
 սերնդոց խառնուրդը ծանր խնդիր մը կը
 յարուցանէր մեր մտքին մէջ՝ որու լուծու-
 մը գտնելու չէինք համարձակէր : Այդ մարդ-

ԼԹ.

կէս ժամի չափ շարունակեցինք պտոյտ-
 նիս, հողը բոլորովին փոխուած էր : ոսկոր-
 ներու դաշտը անհետացած եւ դիմացնիս կը
 բարձրանար անտառ մը : հասարակածային
 անտառներու բոլոր վեհութեամբը : Երրոր-
 դական դարու բուսաբերութիւնն էր աս իր
 բոլոր չքեղութեամբը : ահագին արմաւենի-



կային էակները մեռնելնուն վերջը վար սա-
 հելով մինչեւ մեր գտնուած տեղը իջած էին
 թէ ո՛չ՝ Լիտէնպրօք ծովուն եզերքը ծնած.
 ապրած ու մեռած էին՝ իբր բնակիչներ երկ-
 րագունտիս : Մինչեւ հիմա կենդանի ձուկեր
 եւ ծովային հրէշներ տեսանք, միթէ՞ տա-
 կուին մարդկային էակ մը կը շրջէ՞ր մեր
 մօտերը :

ներ, որոց տեսակը հիմա կորսուած է : շո-
 ճիներ, որք կը ներկայացնէին կոնարերե-
 լու տեսակները, իրար կապուած էին բու-
 սային չու : ններէ հիւտուած տեսակ մը ցան-
 ցով : մամուռէ թանձր խաւ մը կը ծածկէր
 գետինը : քանի մը գետակներ կը խոխոջէին
 շուքին մէջ : ասոնց եղերքէն վրայ կը բարձ-
 րանային յաղթարեւմ պտերներ : Բայց բո-

լոր այս ծառերը, տունները, մամուռները մեր գիտցած անուշ կանաչ գոյնը չունենին. ամենքը միասին թուռած մութ գոյնի մը մէջ թաղուած կը մնային: Անթիւ անհամար ծաղիկները որոնք երրորդական դարու բուսաբերութեան մէկ յատկանիշն են, գունատ կը կախուէին ճիւղերն ի վար, կարծես թէ գոյնը նետած թուղթէ շինուած ըլլային:

Հօրեղբայրս ու ես մտանք այս անտառին մէջ՝ Ժամանակի տեւողութեան միջոցին փտած ու ինկած ծառերը կը թողուին որ մինչեւ բուսական խորերը թափանցէ մեր ակնարկները: Կը տեսնէի պարկճաւոր, շիկաճերկային տունները որոնք աշխարհիս ամէն տեսակ որոճացող կենդանիներու սընունդն են: Աւելի հեռուն կ'երեւէր, իրարու մէջ անցած ու իրար խառնուած՝ բոլոր այն ծառերը որոնք երկրիս վրայ իրարմէ շատ տարբեր միջավայրերու մէջ կ'աճին. Վաղնիս՝ արմաւենիին քով, Աւտրալեան անգալիթոսը՝ Նորվեկիոյ չոճիին կը կըռթընէր, Հիւսիսային ցարափին՝ Զելանտական քօրէսին կը խառնէր իր ճիւղերը: Աշխարհիս ամէնէն ճարպիկ բուսաբանը պիտի անճրկէր այս անտառին բոյսերը դասակարգելու:

Յանկարծ կանգ առի. հօրեղբորս՝ ձեռքը բռնեցի:

Տարտամ լոյս մը անտառին հեռաւոր մասերուն մէջ կը տարածուէր եւ մենք կարող կ'ըլլայինք հոն անցած դարձածը տեսնել: Կարծեցի տեսնել... Ո՛հ. իրօք աչքովս կը տեսնէի ահագին շուքեր որոնք ծառերուն տակ կը շարժուէին: Պտկածանիներու ահագին խումբ մը էր սա որ ասդին անդին կը թափառէր: Սոսկալի փիղեր՝ որոնց պտտիճները օճերու պէս՝ ծառերուն մէջ կը խշրտային: Վիթխարի Ժանիքներնուն՝ կոճղերուն՝ զարնուելու ձայնը կը լսէի. ճիւղերը կը ճարճատէին եւ տերեւներու ահագին կոյտեր՝ այն գազաններուն կոկորդին մէջ անյայտ կ'ըլլային:

— Յառա՛ջ երթանք, գոչեց հօրեղբայրս, զիս ալ քաշելով, յառա՛ջ երթանք:

— Չէ՛, հօրեղբայր չէ՛. ետ դառնանք: Վրանիս զէնք չունինք, ի՞նչ կրնանք ընել այս ճիւղներու ջոկատին մէջ, և ո՛չ մէկ մարդկային էակ կարող է՝ զսպել առոնք:

— Եւ ո՛չ մէկ մարդ, ըսաւ հօրեղբայրս

կամաց ձայնով մը: Կը սխալիս Աքսէ՛լ, նայէ՛, հոն նայէ՛. կենդանի էակ մը, մա՛րդ մը կը տեսնեմ հոն:

Սոսկալի բան, մենէ քառորդ մղոն մը հեռուն, մարդկային էակ մը, բրօթէ մը, Պիսիդոնի մէկ նոր զաւակը, ծառի ահագին կոճղ մը ձեռքը առած, այս գազաններուն հօտին վրայ կը հսկէր:

Այո՛, առաջուան տեսածնուս պէս դիակ մը չէր ասիկա. հսկայ մըն էր՝ կարող այն պտկածանիները վարելու: Հասակը 12 ոտքէն աւելի էր. գլուխը՝ կովու գլխուն չափ խոշոր՝ բարձր ճիւղերուն մէջ կը կորսըւէր:

Ապշած, քարացած, կեցած տեղերնիս մնացինք: Բայց փախչիլ պէտք էր, կրնար ըլլալ որ տեսնուէինք:

— Եկէ՛ք, եկէ՛ք, ըսի հօրեղբորս թեւէն քաշելով:

Եւ առաջին անգամ ըլլալով դասախօսը թողուց որ գինքը առաջնորդեմ:

Քառորդ ժամ մը ետքը ամէն վտանգէ զերծ էինք:

Հիմա՛ որ կրնամ հանդարտ գլուխով խորհիլ այդ գէպքին վրայ, հիմա որ կ'ըսեմ, ամիսներ անցնելով՝ կրնամ պաղարիւնով դատել այդ երեւոյթը, հաւատալիս չի գար: «Չէ՛, տեսածս մարդ մը չէր. կապիկ մըն էր ան, մարդակերպ էակ մը, նախնական դարերու մէջ ապրող քառաձեւանի մը մէկ տեսակը. բայց մարդ մը չէր. երբէ՛ք չպիտի ընդունիմ թէ երկրիս ներսերը մարդկային էակ մը կարենայ գոյութիւն ունենալ կենդանի վիճակի մէջ եւ իրեն հետ ամբողջ սերունդ մըն ալ:

Ինծի անանկ կուգար որ պտտած տեղերնիս անգամ մը արդէն տեսած էի. ծովեզերքին ժայռերը, անոնց ձեւը, ինծի ծանօթ կ'երեւային: Սոյն կարծիքս հօրեղբորս հաղորդեցի:

— Ճիշդ մեկնած կէտերնուս վրայ չենք ինկած, ըսի, կրախպէնի նաւահանգիստն քիչ մը հեռուն կը գտնուինք. եթէ քիչ մըն ալ վար երթանք, գուցէ Հանսի լաստը շինած խորշին մէջ դտնենք ինքզինքնիս:

— Ո՛հ. Աքսէլ, ես բնաւ մեր ձգած հեռքերէն բան մը չտեսայ:

— Բայց ես կը տեսնեմ կոր, գոչեցի,

գետինը ինկած առարկայի մը վրայ խնայով
և զայն վերցնելով:

— Ի՞նչ է ատիկա:

— Տեսէ՛ք...

Եւ հորեղորս ցցոցի ժանդոտած դա-
նակ մը:

— Հա՛, բաւ, դո՛ւն մէկտեղ բերեր էիր
այդ դանակը:

— Բայց ո՛չ. ես ասանկ բան չէի տա-
նում:

— Ո՛չ ալ ես, պատասխանեց հորեղ-
բայրս:

— Ձարմանալի՛ բան:

— Բայց ո՛չ, Աքսէլ: Հւանտացիները
ճիշդ ասանկ դանակներ կը գործածեն, կա-
րելի է Հանսի կը պատկանի այդ:

— Ո՛չ, ըսի, Հանս ասանկ զէնք բնաւ
չունէր վրան:

— Արդեօք նախաճրհեղեղեան մարդու
մը զէնքն է. գոչեցի մէկէն բայց ո՛չ, այդ
ալ կարելի չէ. այս դանակը պողպատէ չին-
ուած է և ոչ թէ քարէ կամ պղինձէ:

— Կեցի՛ր. Աքսէլ, ըսաւ հորեղբայրս
հանդարտ ձայնով մը. այդ դանակը տա-
նըվեցերորդ դարու գէնք մըն է, զոր ա-
զատորդին կը կրէին. սպա-
նիական ծագում ունի ատիկա: Ո՛չ ինձի,
ո՛չ քեզի ո՛չ Հանսի և ո՛չ ուրիշ ո եւ է
մարդկային հակի կը պատկանի:

— Բայց մինակը չեկաւ անուշա հոս.
ինքնիկէն չձուցաւ այսպէս. մենէ առաջ
մէկը հոս եկած է:

— Այո՛, մէկ մարդ մը միայն:

— Ո՞վ է ատիկա:

— Եւ այդ մարդը իր անունը քանդա-
կած է այս դանակով ժայռի մը վրայ: Փըն-
տըռնք, Աքսէլ, փնտռե՛նք:

Թարգմ.

ՁԱՐԵՆ Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շաքունսկի)



ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Սիբիլի բնակարան Նեան Կ. Պերպերեան:

«Տասնօրեայ»-ի մէջ միշտ մասնաւոր ու-
շադրութեամբ կը կարդամ այն դրութիւն-
ները որ ձեր ստորագրութիւնը կը կրեն, և

միշտ բան մը կը գտնեմ օգտուելու ձեր
փորձառութենէն, առանց սակայն կրելու
այն վշտահար յոռետեսութիւնը զոր կ'ար-
տայայտէք հրատարակչական ձեռնարկներու
համար:

Վերջին (26) թիւին մէջ յայտնած դա-
ղափարներէդ շատին համաժիտ եմ: Այո՛,
շատ դիւրին է խրատ տալը, քննադատելը:
Բանն ան է որ այդ խրատատուները թղթի
վրայ գրածնին չեն գործադրեր ու չեն ա-
պացուցաներ: Ի՞նչ հեշտ է ծրագրել, բայց
երբ կարգը գոյ փոսմա մը բան երեւան
հանել, կ'անճրկին կը մնան, ինչպէս օրի-
նակները ցոյց տուին և իրենց անճարակու-
թեամբ Մանկավարժական թերթ մը չը-
կրցան յարատեւել:

Ի՞մ ալ խոնարհ կարծիքս է թէ Հանրա-
գիտակը պէտք ունի աւելի կամ նուազ ձեւա-
փոխութեան: Աւելի սիրուն ու հրապուրիչ,
աւելի հետաքրքրական՝ նոյն իսկ զուարճա-
լի հանդէս մը շատ պիտի նպաստէր ձեր դի-
տած նպատակին, ու պիտի վարձատրէր ա-
նոր հրատարակիչը: Ու ես կ'առաջարկեմ
նաեւ որ ձեր մրցումի ու վարձատրութեան
դրութիւնը ուրիշ ճիւղերու և նիւթերու
ալ պատշաճեցնէք:

Օրինակ — Մեր դպրոցական մատենագրու-
թիւնը աղքատ է մանկական ոտանաւորներու
կողմէ (1): Ուրեմն, մրցումի մը բացէք ման-
կական բանաստեղծութեան ճիւղին համար:
Հաւանած և հրատարակուածներուն փոխա-
րէն՝ դիւրք չէ՛ փարա ալ կընայ տրուիլ:
Մանկական (բայց զո՛ւա մանկական)
հէքեպիներու մրցում մը բացէք, չի հրաւեր
կարդացէք որ այս կարգէ նիւթերը գոյ-
ւառներու մէջ հաւաքել սկսին:

Մանկական-պատանեկան, դպրոցական-
ընտանեկան կեանքէ ժամանակակից դիւր-
ուածներու, ազնիւ արարքներու, շինիչ նը-
կարագիւրներու վրայ պզտիկ ու շահեկան
պատմութիւններ, մանկական արիւթեան

(1) Հոս Հոն ցրուած ունինք, այո՛, մանկական
ոտանաւորներ, բայց շատ ցանցմոռ ու տարտղնած
փնտրի մէջ: Պէտք է ձեռնհաս և խտտապա-
հանջ ոգով մը զանոնք հաւաքել, տախտիկ մէկ հա-
տորի մէջ: «Մանկական ոտանաւորներու» ճիւղ-
ով հատոր մը ես հրատարակելի 1897ին: Նոյնը
ըրաւ Տիկին Հ. Ասատուր ալ Թարգմանածոյ ոտա-
նաւորներ զննելով Գերականութեան գրեթէ մէջ:

ճիշտակներ և այլն:

Եւ դեռ չէր յիշատակու վրայ կարելի է փոխնի փոխ ընել մրցումը՝ ճոխացնելու համար Հանրագիտակիդ էջերը, աւելի հրապուրիչ ընելու գանձնք և իրական նպատակ մը բերելու դարձողական մասնագիտական գաղափարին որուն կազմութեան համար ես ձեզի չափ յուսեմ եմ, ո՛չ ալ աճապարող: Ասանկ բաներ, ինչպէս գիտնալու է ձեր հարուստ փորձառութիւնը և եփուն միտքը, ասանկ բաներ մէկ օրէն միւսը չեն ամբողջանար: Կամաց կամաց, քթիկ քթիկ, քայլ առ քայլ կարելի է հասնիլ նպատակին: Բայց, ինչպէս Բիւրակի մէջ յանձնարարած էի ժամանակին, ամէն դպրոցական վարչութիւն իրեն համար պարտաւորիչ գործ ընելու է դպրոցին մէջ Գրադարան մը հաստատելը՝ հոգ չէ թէ շատ պզտիկ դրամագըլուխով մը:

Ուրիշ բան մ'ալ դիտեցի ձեր վերջին յօդուածին մէջ: Ինչ բանի համար որ ուրիշը կը մեղադրէք, դուք ինքնին ալ կ'ընէք անգիտակից մը: Կ'ընէք թէ «միջեւ ցայ սօր նոյն իսկ մանչերու համար Բարոյագիտութեան դասագիրքը չունինք»: Պրպտեցէք հիներուն մէջ և այս նիւթին վրայ մէկէ աւելի գրքեր, նոյն իսկ դասագրքեր գոյութիւնը պիտի հաստատէք: Իսկ նորերէն յիշէք Շարլ Տիւրիւի բարոյագիտութիւնը դորթարգմանած է Արամեան: Այլընչաց դասիւստիկութիւնը և Մանչերու դասիւստիկութիւնը (զատ զատ հատորներ) գործնք թարգմանած է Յուսիկ վարդապետ Էմիլիեան: Վերջապէս՝ Նոր դպրոցի դասընթացքին Բարոյագիտութեան մասը, և այս անգամ լոյս տեսած Հանգիստարանը որ դերապանցապէս բարոյագիտական գիրք մ'է՝ տեսական որքան գործնական պարունակութեամբ:

Բայց ինծի համար գեղեցիկ ու հաճելի անակնկալ մ'իշխաւ Տասնօրեայիդ մէջ հրատարակուող «Բարոյական ու գործնական դաստիարակութիւնը աղջիկներու վարժարանի համար», և պարտք կը սեպեմ հրապարակող շնորհաւորելու անոր հեղինակը. Տիկին Փ. Հազարապետեան: Ընդիւ ուզուած նիւթերն են գործնք կը մշակէ, և շատ ալ պարզ ոճով մը: Ամէն վարժուհի լաւ կ'ընէ ատիկա ընտրելով իր բարոյագիտութեան դասագիրքը և ես կ'առաջարկեմ ձեզի՝ ա-

ռանձին հատորով ալ հրատարակել Տիկին Հազարապետեանի այդ գործը.

Պզտիկ թերադրութիւն մ'ալ, եթէ կը ներէք: Ձեր գրութեան մէջ Le Volume յիշած էիք, կարելի չէ՞ որ Տասնօրեայիդ մէջ (որուն եօթնօրեայ ըլլալը կը նախընտրէի) դասընթացքներ, հրահանգներ և վարժութիւններ ալ դնէք նախակրթութեան բոլոր ճիւղերուն վրայ. — ձեռարուեստներ, գծագրութիւն, նաև օտար լեզուներ, ինչպէս Le Volume-ի մէջ կայ, ինչպէս մեր մէջ ալ փորձը եղաւ, ժամանակին հրատարակուած շարժական Ծաղիկ Մանկանցին մէջ: Վտահ եմ թէ լաւ գործ մ'ըրած պիտի ըլլաք, և շատ սիրով պիտի ողջունեն զայն մեր ուսուցիչներն ալ ուսանողներն ալ: Վերջապէս, ասանկ քանի մը բարեփոխումներ ձեր ձեռնարկը պիտի հասցնեն քաջաբերանքի բաղձացուած աստիճանին որուն արժանի է և կը մաղթեմ ի սրտէ որ հասնիք, քանի որ մեր մէջ դուք միայն քաջութիւն կ'ունենաք յարատեւելու մանկական թերթի մը հրատարակութեան գործին մէջ:

26 Յուլիս 1903

ՍՄԱՍՏ ՊԱԽԹԱՆ

Սիրով կը հրատարակենք Ս. Դաւթեան էֆէնտիի պատասխանը՝ երբ մտնաւանդ կը տեսնենք որ շատ մը կէտերու մէջ համաձիւն է մեզի: Անշուշտ կը ներէ մեզի քանի մը դիտողութիւններ ընել իր թերադրութիւններու մասին եւ անգամ մը ևս հաստատել թէ՛ Եւրոպացիներուն կատարած կրթական գործը՝ մենք չենք կրնար ընել եւ մեր դպրոցականները՝ Եւրոպացի դպրոցականներու մակարդակին վրայ չենք կրնար դնել:

Մանկական ոտանաւորները մրցումի դրնելու պէտք չկայ, արդէն ահագին քանակութիւններով կը հասնին մեզի, այնչափ շատ որ եթէ Հանրագիտակի մէջ միւսիկ ու միւսիկ ոտանաւոր դնենք՝ ամբողջ վեց ամիս կրնայինք թերթ հրատարակել պատարաստ ունեցած բանատեղծութիւններով: Այս ահագին քանակութեան մէջէն ընտրուածները (որոնք գրեթէ միշտ քանի մը անուններու շուրջը կը դառնան) սիրով կը հրատարակենք, նոյնպէս կրնայ լրջալ որ մէկդի ձգածներն ալ մէկ կ'երկու աղուորներ աչքէ վրիպին. բայց ամէնը այս է:

ինքնատիպ հէթեթներու, մանկական պատմութիւններու համար՝ նոյն իսկ Հանրագիտակի հրատարակութեան ձեռնարկելէ առաջ շատ տեղեր դիմում ըրինք, նոյնպէս դպրոցական խաղեր տուած ժամանակնիս կոչում ըրինք որ ամէն տղայ իր սովորական գիտցած խաղերը մեզի բացատրէ հանդէսիս մէջ հրատարակելու համար. կրնանք ըսել թէ բնաւ պատասխան չառինք, եթէ հաշուի չառնենք բոլոր անոնք՝ որ խնդրուած էն բոլորովին տարբեր մատուցում մը կ'ընէին:

Մեր մեծ. բարեկամն կը թելադրէ նաեւ Հանրագիտակի մէջ դնել դասընթացքներ, հրահանգներ, ձեռարուեստներ, եւլն: Դաւթեան էֆ. լաւ կը յիշէ թէ սոյն նիւթերու վրայ մեր մէկ տեսակցութեան մէջ այս մասին բաւական խօսուեցաւ, եւ ինքը մեզի առաջարկեց կարող դասատու մը՝ որու աջակցութիւնը կրնայինք վայելել. բայց դժբաղդաբար մեր մեղքէն էր. ինչ էր, այն էֆէնտին ալ պատասխանելու յօժարութիւնն անգամ չունեցաւ մեր առաջարկին:

Դաւթեան էֆէնտի մեզի չափ եւ ալ աւելի փորձառութեամբ գիտէ որ այսպիսի գործ մը մինակ մէկ ձեռքով կարելի է յառաջ տանիլ. փափաքելի պիտի ըլլար որ ամէն ձեռնհաս ուսուցիչ փոխանակ խոչընդոտ մը հանելու մեր դէմ, մեր գործը քամահընելու եւ զայն ամբողջութեան դատապարտելու. բերեր իր քարը դնէր այն շէնքին մէկ անկիւնը որ « Մանուկներու դատարարակութիւն » կը կոչուի՝ եւ որու շինութեան ծառայող ամենափոքր հիւլէն իսկ զոհողութեան մը արդիւնքն ըլլալու է:

Տգեղ սովորութիւն մը ունինք մենք, որով դպրոցական ու եկեղեցական խնդիրներու վրայ շատ կը խօսինք, շատ կը քննադատենք, շատ բաղձանքներ կ'ունենանք, շատ դադողութարներ կը յղանանք. բայց վարժարան մը կարգի դնելու, եկեղեցի մը պայծառ պահելու համար երբ գործի ձեռք զարնել հարկ կ'ըլլայ. ամէնքս ալ կ'անճրկինք կը մնանք. յանցանքը կը գտնենք դրամի չզոյութեան, ժողովուրդին անտարբերութեան վրայ, առանց երբէք խորհելու թէ մենք մեր կրթական ու եկեղեցական գործերը կարգի դնելու հաջող հավիս մինակ ունինք եւ հաւիսով կը մնանք: Շատ փափաքներ եղաւ մանկավարժական թերթ մը հիմնելու, շատ

բաղձանքներ եղան կրօնական թերթ մը հնարաւորութեամբ համար՝ ու ամբողջ գործը ծրարագիր մը կազմելով վերջացած նկատուեցաւ: Սոյն երկու թերթերու համար յայտնուած փափաքները կը յիշեցնէ մեզի գուարձարի մանրամասն մը, ուրիշ չենք ուզեր գրել մեր ընթերցողները:

Ազգայնա ձկնորս մը կը մեռնի. Երբ յուզարկաւորութեան միջոցին տաներէց քահանան ողբագին « Դատեա՛ Տէր » ը կը կարգար, ձկնորսին կինը, ամուսնոյն դադողին քովը նստած բարձրաձայն կուլար ու կողբար — « Վա՛խ չուխա շալվարը էրիկս, վա՛խ լահօր շալը, օսկի սահաթը էրիկս, վա՛խ, օսկի քէօտէքը էրիկս, սըրմա քէօէլի էրիկս վա՛խ »:

Տաներէց քահանան՝ տեղեակ հանգուցեալին ամենախեղճ փիճակին, կը գարմանայ այս բաները լսելուն. Յուզարկաւորութեան յաջորդ օրը, իբր միտքարիչ Տէր պապան կուգայ այրին տունը, անոր փիշոր ամուսնուն — « Օրհնա՛ճ, կը հարցնէ, իրա՛ւ լուսահոգի էրիկդ ոսկի ժամացոյց հայլն ունէր »: — « Չո՛նի, չունէր, Տէ՛ր պապա. կը պատապախանէ այրին, ամա, կը հավաւեր »:

Շնորհակալ ենք մեր Մեծ. բարեկամին որ մեր կողմէ անյիշատակ թողուած ու անգիտացած Բարոյական դատարարակութեան վրայ հրատարակուած գիրքերը մեզի կը յիշեցնէ: Ներողութիւն կը խնդրենք մեր անգիտակցութեան համար եւ մեծաքանակ վճառում կը մօղթենք իրեն:

Ն. Կ. Պ.



ԿԵՅՈՒՆԻՔԻՆ ԵՆՈՐՇ

Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Վհճ. Սուրբանը գնահատելով Տպագրական Տեսչութեան Հայ թերթերու գրաքննիչ Լեւոն պէյ Սուրենեանի բարեք ծառայութիւնները բարհաճած է Սանիթէյի աստիճան չընորհել:

Խմբագրութիւնս իր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտնէ այս առթիւ Լեւոն պէյ Սուրենեանի:

ՄԱՐԱԳՐԱԳԵՏ — ԱՐՏՈՒՍՏԵՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳԻՐՁ — ՀՐԱՏԱՐԱԿԻՁ

Ն. Ե. Ա. Ն. Ա. ՊԵՐՊԵՐՍՅԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ յրազրի դէմ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ

846

சுமத்தித்தொகுத்திட்டு சுமத்தி
புதுபுதுபுதுபுது

Իսկայրց Եւլադրաւիֆ

1. 2014-2015, 2016-2017, 2018-2019, 2020-2021, 2022-2023, 2024-2025, 2026-2027, 2028-2029, 2030-2031, 2032-2033, 2034-2035, 2036-2037, 2038-2039, 2040-2041, 2042-2043, 2044-2045, 2046-2047, 2048-2049, 2050-2051, 2052-2053, 2054-2055, 2056-2057, 2058-2059, 2060-2061, 2062-2063, 2064-2065, 2066-2067, 2068-2069, 2070-2071, 2072-2073, 2074-2075, 2076-2077, 2078-2079, 2080-2081, 2082-2083, 2084-2085, 2086-2087, 2088-2089, 2090-2091, 2092-2093, 2094-2095, 2096-2097, 2098-2099, 2100-2101, 2102-2103, 2104-2105, 2106-2107, 2108-2109, 2110-2111, 2112-2113, 2114-2115, 2116-2117, 2118-2119, 2120-2121, 2122-2123, 2124-2125, 2126-2127, 2128-2129, 2130-2131, 2132-2133, 2134-2135, 2136-2137, 2138-2139, 2140-2141, 2142-2143, 2144-2145, 2146-2147, 2148-2149, 2150-2151, 2152-2153, 2154-2155, 2156-2157, 2158-2159, 2160-2161, 2162-2163, 2164-2165, 2166-2167, 2168-2169, 2170-2171, 2172-2173, 2174-2175, 2176-2177, 2178-2179, 2180-2181, 2182-2183, 2184-2185, 2186-2187, 2188-2189, 2190-2191, 2192-2193, 2194-2195, 2196-2197, 2198-2199, 2200-2201, 2202-2203, 2204-2205, 2206-2207, 2208-2209, 2210-2211, 2212-2213, 2214-2215, 2216-2217, 2218-2219, 2220-2221, 2222-2223, 2224-2225, 2226-2227, 2228-2229, 2230-2231, 2232-2233, 2234-2235, 2236-2237, 2238-2239, 2240-2241, 2242-2243, 2244-2245, 2246-2247, 2248-2249, 2250-2251, 2252-2253, 2254-2255, 2256-2257, 2258-2259, 2260-2261, 2262-2263, 2264-2265, 2266-2267, 2268-2269, 2270-2271, 2272-2273, 2274-2275, 2276-2277, 2278-2279, 2280-2281, 2282-2283, 2284-2285, 2286-2287, 2288-2289, 2290-2291, 2292-2293, 2294-2295, 2296-2297, 2298-2299, 2300-2301, 2302-2303, 2304-2305, 2306-2307, 2308-2309, 2310-2311, 2312-2313, 2314-2315, 2316-2317, 2318-2319, 2320-2321, 2322-2323, 2324-2325, 2326-2327, 2328-2329, 2330-2331, 2332-2333, 2334-2335, 2336-2337, 2338-2339, 2340-2341, 2342-2343, 2344-2345, 2346-2347, 2348-2349, 2350-2351, 2352-2353, 2354-2355, 2356-2357, 2358-2359, 2360-2361, 2362-2363, 2364-2365, 2366-2367, 2368-2369, 2370-2371, 2372-2373, 2374-2375, 2376-2377, 2378-2379, 2380-2381, 2382-2383, 2384-2385, 2386-2387, 2388-2389, 2390-2391, 2392-2393, 2394-2395, 2396-2397, 2398-2399, 2400-2401, 2402-2403, 2404-2405, 2406-2407, 2408-2409, 2410-2411, 2412-2413, 2414-2415, 2416-2417, 2418-2419, 2420-2421, 2422-2423, 2424-2425, 2426-2427, 2428-2429, 2430-2431, 2432-2433, 2434-2435, 2436-2437, 2438-2439, 2440-2441, 2442-2443, 2444-2445, 2446-2447, 2448-2449, 2450-2451, 2452-2453, 2454-2455, 2456-2457, 2458-2459, 2460-2461, 2462-2463, 2464-2465, 2466-2467, 2468-2469, 2470-2471, 2472-2473, 2474-2475, 2476-2477, 2478-2479, 2480-2481, 2482-2483, 2484-2485, 2486-2487, 2488-2489, 2490-2491, 2492-2493, 2494-2495, 2496-2497, 2498-2499, 2500-2501, 2502-2503, 2504-2505, 2506-2507, 2508-2509, 2510-2511, 2512-2513, 2514-2515, 2516-2517, 2518-2519, 2520-2521, 2522-2523, 2524-2525, 2526-2527, 2528-2529, 2530-2531, 2532-2533, 2534-2535, 2536-2537, 2538-2539, 2540-2541, 2542-2543, 2544-2545, 2546-2547, 2548-2549, 2550-2551, 2552-2553, 2554-2555, 2556-2557, 2558-2559, 2560-2561, 2562-2563, 2564-2565, 2566-2567, 2568-2569, 2570-2571, 2572-2573, 2574-2575, 2576-2577, 2578-2579, 2580-2581, 2582-2583, 2584-2585, 2586-2587, 2588-2589, 2590-2591, 2592-2593, 2594-2595, 2596-2597, 2598-2599, 2600-2601, 2602-2603, 2604-2605, 2606-2607, 2608-2609, 2610-2611, 2612-2613, 2614-2615, 2616-2617, 2618-2619, 2620-2621, 2622-2623, 2624-2625, 2626-2627, 2628-2629, 2630-2631, 2632-2633, 2634-2635, 2636-2637, 2638-2639, 2640-2641, 2642-2643, 2644-2645, 2646-2647, 2648-2649, 2650-2651, 2652-2653, 2654-2655, 2656-2657, 2658-2659, 2660-2661, 2662-2663, 2664-2665, 2666-2667, 2668-2669, 2670-2671, 2672-2673, 2674-2675, 2676-2677, 2678-2679, 2680-2681, 2682-2683, 2684-2685, 2686-2687, 2688-2689, 2690-2691, 2692-2693, 2694-2695, 2696-2697, 2698-2699, 2700-2701, 2702-2703, 2704-2705, 2706-2707, 2708-2709, 2710-2711, 2712-2713, 2714-2715, 2716-2717, 2718-2719, 2720-2721, 2722-2723, 2724-2725, 2726-2727, 2728-2729, 2730-2731, 2732-2733, 2734-2735, 2736-2737, 2738-2739, 2740-2741, 2742-2743, 2744-2745, 2746-2747, 2748-2749, 2750-2751, 2752-2753, 2754-2755, 2756-2757,

Unabhängig & unabhängig



